ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ **ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

15 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Արտյոմ Գեվորգյանը, Սահակ Գյուլինյանը, Սոֆիա Խաչատրյանը, Թովմաս Հովհաննիսյանը, Էմմա Մարգարյանը, Գոռ Մեծոյանը, Աննա Մուրադյանը, Վահագն Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ստելլա Բադալյան, Խոսրով Թարվերդյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 15-ի թիվ 1 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 116-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26- ի N 123 - Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3. Նոր Հաճըն համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի 4 -րդ եռամսյակի կատարման մասին:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

5.«ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին

6.«Բիդեք» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Արգել բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին

7. Նոր Հաճըն համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 01-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 116-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 116-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ համաձայն 1-15 հավելվածների:

2. Սույն որոշման N 1-15 հավելվածները ուժի մեջ է մտնում հրապարակմանը օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 02-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 123-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ)

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>օրենքի 18-րդհոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և«Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Նոր Հաճըն համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատվել է 2024 թվականի դեկտեմբերի 26-ին և չի արտացոլվել 2024 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝որոշում է.

1.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի <Նոր Հաճըն համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին> N 123-Ն որոշման 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Բյուջեի փոփոխված տարբերակը ըստ հատվածների՝ կցվում է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 03-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ)

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,պահանջներով ՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին, լսելով համայնքի 2024 թվականի 4-րդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ որոշում է.

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2024 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է):

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 04-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ)

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նոր Հաճըն համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 05-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը' Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է'

1.Տրամադրել նախնական համաձայնություն «ՆՈՐ ՀԱՃՆ ՀԻԼԼՍ» ՍՊԸ-ի կողմից Նոր Հաճըն քաղաքի Զ. Անդրանիկ փողոցի թիվ 8/3 հասցեում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների իրականացմանը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 06-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԲԻԴԵՔ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՐԳԵԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1.Տրամադրել նախնական համաձայնություն «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից Նոր Հաճըն համայնքի Արգել բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների իրականացմանը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 07-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1- ԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 1- ին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվական փետրվարի -ը՝ ժամը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 08-Ա)*

Ավագանու անդամներ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕԶՆԵՑՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Արման Սմբատյանը

_____